ՓԱՌԱՏՈՆ

## ՕԶՆԻԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑԸ՝ ԴՄԱՆԻՍԻԻ ԷԹՆՈՓԱՌԱՏՈՆԻՆ

*Հոկտեմբերի 23-ին, Դմանիսիի մունիցիպալիտետի Մշակույթի տանը, անցկացվեց ժողովրդագրական փառատոն: Նախագիծն իրականացվեց «Վրաստանի կամավոր» միության աջակցությամբ:*



Քվեմո Քարթլիի տարածաշրջանից փառատոնին մասնակցեցին Դմանիսիի, Ծալկայի, Մառնեուլիի, Ռուսթավիի, Բոլնիսիի, Գարդաբանիի ներկայացուցիչները:

Ծալկայի մունիցիպալիտետից հայկական մշակույթը ներկայացրեց Օզնիի հանրային դպրոցի 12 աշակերտ, ով փառատոն էր բերել հայկական ուտեստներ, ձեռագործ աշխատանքներ: Նրանք հանդես եկան նաեւ ասմունքով, երգ ու պարով: Առանձնակի տպավորիչ էր նրանց կողմից վրացական բանաստեղծությունների հուզիչ ընթերցումը:

Փառատոնի մասնակիցները համտեսեցին տարբեր էթնիկ ներկայացուցիչների բնորոշ ուտեստներ, որոնցից մեծ հավանության արժանացան հայկական լավաշն ու տոլման:

Օզնիի հանրային դպրոցի աշակերտները Դմանիսիից վերադարձան հարուստ տպավորություններով:

***ՄԻՐԱՆԴԱ ԻԱԿՈԲԻՁԵ***

***Օզնիի հանրային դպրոցի՝ «Վրացերենը՝ որպես երկրորդ լեզու» ուսուցչուհի***

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼ Է ԾՈՒՂՐՈՒԹԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ

*Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի՝ Մատենադարանի շնորհիվ եւ Ամերիկայի Հարավկովկասյան հետազոտության կենտրոնի կողմից տրամադրված ֆինանսավորմամբ, հնարավոր է դարձել իրականացնել Ծուղրութի Ավետարանի (կամ Հովհաննես Ավետարան) կոնսերվացման եւ վերականգնման աշխատանքները տեղում՝ Ախալցիխեի Ծուղրութ գյուղում:*



Ինչպես հայտարարեց վերականգնման աշխատանքները գլխավորող, Մատենադարանի վերականգնման բաժնի վարիչ, քիմիական գիտությունների թեկնածուԳայանե Էլիազյանը, մասնագետները Ծուղրութի Ավետարանի վերականգնմանը սպասել են շուրջ կես դար: «Ես այս աշխատանքը մեծ հաղթանակ եմ համարում, քանի որ Ավետարանը ոչ մի կերպ չհաջողվեց բերել Մատենադարան, աշխատանքները կատարվեցին տեղում, առանց համապատասխան գործիքների»,- ասաց նա:

Էլիազյանի խոսքով, ձեռագիրը բավական լուրջ խնդիրներ ուներ, բայց շնորհիվ բանիմաց մասնագետների, նոր կյանք է ստացել՝ ամբողջ ձեռագիրն ախտահանվել, մաքրվել է, վերացվել են հին վերանորոգումները: «Ծուղրութի Ավետարանը կունենա երկար կյանք, եթե պահպանվեն համապատասխան պայմանները: Մենք ուղարկել ենք ուղեցույց, բացատրել, թե ինչպես պետք է իրականացվի պահպանությունը»,- հավելեց նա:

Ծուղրութի Ավետարանի վերականգնման աշխատանքներն իրականացվել են հոկտեմբերի 8-18-ը:

Ծուղրութի հազարամյա Ավետարանը 1830 թվականից ի վեր խնամքով պահպանել եւ սերունդներին է փոխանցել Սապոնջյանների ընտանիքը՝ որպես գյուղի սուրբ մասունք:

## ՎԵՐԱՕԾՎԵՑԻՆ ԱԽԱԼՔԱԼԱՔԻԻ ՍՈՒԼԴԱ ԳՅՈՒՂԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵՎ ՎԱՉԻԱՆ ԳՅՈՒՂԻ ՍՈՒՐԲ ՍԻՈՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ



***2016 թվականի հոկտեմբերի 22-23-ին, ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի, վերաօծվեցին Ախալքալաքի շրջանի Սուլդա գյուղի Սուրբ Խաչ եւ Վաչիան գյուղի Սուրբ Սիոն եկեղեցիները:***

Նշենք, որ Սուլդա գյուղի եկեղեցին Վիրահայոց թեմի թվով 55-րդ, իսկ Վաչիանիինը՝ թվով 56-րդ գործող եկեղեցին է:

Սուլդայի Սուրբ Խաչ եւ Վաչիանիի Սուրբ Սիոն բազիլիկ եկեղեցիների շինությունը կառուցվել են 1829-1830 թվականներին, Կարնո գավառից եւ Վերին Բասեն եւ Թորդան գյուղերից Ջավախեթի փոխադրված հայերի կողմից:

Սուլդայի բնակիչները, Ռուսաստանում հաստատված, ծնունդով սուլդացի Հրազդան Առաքելյանի բարերարությամբ, հանձն առան եկեղեցու վերակառուցման աշխատանքները:

Վաչիանիի բնակիչները կառուցեցին եկեղեցու զանգակատունը, եկեղեցու բազիլիկ շինությունը վերածվեց գմբեթավորի, բարեկարգվեց տարածքը: Վերակառուցման աշխատանքներին մեծապես օժանդակեցին Ռուսաստանում բնակվող վաչիանցիները:

Սրբազան արարողությանը մասնակցեցին Սամցխե-Ջավախեթիի եւ Ծալկայի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Բաբգէն վարդապետ Սալբիյանը, թեմի Առաջնորդի օգնական Խորեն վարդապետ Հովհաննիսյանը, քահանայից դասը: Արարողությանը ներկա էին Վրաց Ուղղափառ եկեղեցու Ախալքալաքիի եւ Կումբուրդոյի միտրոպոլիտ Նիկոլոզը, Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Հենզել Մկոյանը, Ռուսլան Պողոսյանը, Սամվել Պետրոսյանը, նոր գումարման խորհրդարանի պատգամավոր Սամվել Մանուկյանը, խորհրդարանի պատգամավորության թեկնածու, թբիլիսցի Դավիթ Ճիճինաձեն, տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչներ, Հայաստանի ԱԺ անդամներ՝ ծնունդով ջավախեթցի Վարդան Այվազյանը եւ Տաճատ Վարդապետյանը, ՋԱՀ-ի հոգաբարձուների խորհրդի նախագահ Սոս Սահակյանը, հյուրեր՝ Վրաստանի տարբեր շրջաններից, Հայաստանից, Ռուսաստանից:



ՈԼՈՐՏ

საქართველოს იუსტიციის სამინისტრო

## ՔՆՆԱՐԿՎԵՑ ԲԻԶՆԵՍ-ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԿՈՄԵՐՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՀԻՄՆՄԱՆ ՀԱՐՑԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Բարեփոխման նպատակը կոմերցիոն վեճերի կարգավորման գործում դատավարության արագ եւ որակյալ գործունեության ավելացումն է, ինչը կնպաստի Վրաստանում ներդրումային մթնոլորտի կտրուկ բարելավմանը, ներդրումների, այդ թվում՝ անմիջական օտարերկրյա ներդրումների ծավալների մեծացմանը եւ, դրանից ելնելով, էկոնոմիկայի ու դրա աճի տեմպերի հետագա բարձրացմանը:

Բարեփոխման եւս մի նշանակալի արդյունք քաղաքացիական կոլեգիաների բեռնաթափումն ու կուտակված գործերի թվաքանակության նվազեցումն է:

Հատուկ պալատի անհրաժեշտության, դրա իրավասությունների, դատավարության համակարգում պալատի տեղի եւ դատավորների մասին շնորհանդեսը ներկայացրեց Վրաստանի արդարադատության նախարարի առաջին տեղակալ Ալեքսանդր Բարամիձեն: Նիստի մասնակիցները քննարկեցին կոմերցիոն դատարանի մոդելները, որոնք փորձարկվել են Եվրոպայի առաջատար երկրներում, այդ թվում՝ Անգլիայում, Իռլանդիայում, Հոլանդիայում, Բոսնիա-Հերցեգովինայում, Գերմանիայում: Ներկայացվեցին դրանց գործունեության օրինակները ԱՄՆ-ում, Դուբայում, Սինգապուրում եւ Կանադայում: Նիստի մասնակիցները քննարկեցին նաեւ կոմերցիոն կոլեգիաների իրավասության հարցերը, դատավարական կոլեգիաների հիմնման մեխանիզմները եւ այլն:

Միջոցառման մասնակիցները ուշադրությունը բեւեռեցին նաեւ այն հարցին, թե ինչպես է իրականացվելու դատավորների զատումը բիզնես-վեճերի գործերից, եւ ի գիտություն ընդունեցին այդ հարցով աշխատող խմբի գործունեության արդյունքները:



Հատուկ պալատի հիմնման գործընթացը, մասնավոր իրավունքի բարեփոխման իրականացման միջգերատեսչական համակարգող խորհրդի հովանու ներքո, ղեկավարում է արդարադատության նախարարությունը, իսկ խորհրդատվությունները ներկայացնում է «Dechert Georgia» ՍՊԸ-ն, որը արտասահմանում գրանցված իրավաբանական «Դեկրետ» ընկերության մասնաճյուղն է: «Դեկրետը» գործում է աշխարհի մի շարք երկրներում, եւ այն քաջատեղյակ է կոմերցիոն դատավարական համակարգերին ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Իռլանդիայում, Սինգապուրում եւ այլ երկրներում: «Dechert Georgia»-ն կուսումնասիրի եւ կվերլուծի բարեփոխման բոլոր փուլերն ու, արդարադատության նախարարության ղեկավարությամբ, կմշակի կոմերցիոն կոլեգիաների/պալատների հիմնման դրույթի ռազմավարությունը, գործունեության ծրագիրը եւ համապատասխան նորմատիվ ակտերը:

Կոմերցիոն կոլեգիաների/պալատների հիմնման համար անհրաժեշտ օրենսդրական փաթեթը Վրաստանի խորհրդարանին, ենթադրաբար, կներկայացվի 2017 թվականի առաջին կեսին: Զուգահեռաբար, կսահմանվեն դատավորների թեկնածուների արտասահմանում վերապատրաստման եւ վարժանքների ծրագրերի համակարգման, հարկային եւ առեւտրական դատավարությունում, ինչպես նաեւ իրավունքի մյուս ոլորտներում:

Մասնավոր իրավունքի բարեփոխման իրականացման միջգերատեսչական համակարգող խորհուրդը նախորդ իրավական բարեփոխումների անցկացման համակարգող խորհրդի իրավաժառանգորդն է: Մյուս՝ նման խորհուրդների օրինակով, այն իրենից ներկայացնում է միջգերատեսչական կառույց: Խորհրդի կազմում են Վրաստանի գործադիր, օրենսդիր եւ դատական իշխանությունների ներկայացուցիչները, ոչ կառավարական կազմակերպությունների, Վրաստանում հավատարմագրված միջազգային առաքելությունների, ակադեմիական եւ գործարար շրջանների ներկայացուցիչները: Խորհրդի նպատակը մասնավոր իրավունքի առանձին ուղղությունների բարեփոխման համար առաջարկությունների/հանձնարարականների մշակումն է եւ օրինանախագծերի նախապատրաստումը:

Ð²ðò – ä²Î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²½²Ü ❋ ÊàðÐàôð¸Üºð

²èàÔæ²ä²ÐàôÂÚàôÜ

## ԳԵՐ ՄԱՐԴԻԿ ԱՎԵԼԻ ԱՐԱԳ ԵՆ ԾԵՐԱՆՈ՞ՒՄ



***Լսել եմ, որ գիտական շրջանակներում լայն տարածում է գտել այն դրույթը, թե գեր մարդկանց մոտ ծերացման գործընթացն ավելի արագ է ընթանում: Որքանո՞վ է դա համապատասխանում իրականությանը:***

***Տ. Մարտիրոսյան***

*Ախալքալաքի*

Իրոք, ավելորդ քաշը կարող է արագացնել ուղեղի ծերացումը. բարեկազմ եւ գեր մարդկանց նյարդային համակարգի վիճակի դիտարկումները ցույց են տվել, որ գեր մարդկանց ուղեղի հյուսվածքը միջին հաշվով 10 տարով ավելի ծեր է երեւում, քան քաշի հետ կապված խնդիր չունեցող հասակակիցներինը:

Այդ մասին ասված է Neurobiology of Aging հանդեսում հրապարակված հոդվածում:

«Ծերանալու համեմատ, մեր ուղեղի ծավալն աստիճանաբար փոքրանում է, եւ գեր մարդկանց մոտ այդ գործընթացը, չգիտես ինչու, ավելի արագ է ընթանում, քան նորմալ քաշ ունեցող մարդկանց մոտ: Մենք չգիտենք, թե ինչու է դա տեղի ունենում, եւ միայն կարող ենք գուշակել՝ արդյոք ճարպակալումն ուղեղի «գերչորացո՞ւմ» է առաջացնում, թե՞ ընդհակառակը ճարպակալումն այնպիսի գործընթացներ է առաջացնում, որոնք ուղեղին ստիպում են ավելի արագ ծերանալ»,- հայտարարել է Քեմբրիջի համալսարանի (Մեծ Բրիտանիա) աշխատակցուհի Լիզա Ռոնանը:

Ռոնանը եւ նրա գործընկերները այդ տարօրինակ ֆենոմենը բացահայտել են՝ ուսումնասիրելով Քեմբրիջի 20-ից մինչեւ 87 տարեկան հասակի ավելի քան 500 բնակիչների ուղեղի նկարահանումները, որոնք մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիայի օգնությամբ ստացվել են քաղաքի հիվանդանոցներից մեկում:

²èúðº²Î²Ü

## ԻՆՉՊԵՍ ՊԱՀՊԱՆԵԼ ԿՏՐՎԱԾ ԾԱՂԻԿՆԵՐԸ



***Հաճելի է, երբ, որպես նվեր կամ հատուկ ուշադրության արտահայտում, ծաղիկներ են նվիրում, բայց՝ փխուր, երբ մի քանի օր անց դրանք թառամում են: Ինչպե՞ս կարելի է երկարաձգել դրանց «կյանքը»:***

***Վ. Սուքիասյան***

*Թբիլիսի*

**Վարդերի** պոչերն անպայման պետք է կտրել ջրի տակ, հեռացնել ավելորդ տերեւներն ու փշերը: Ծաղկամանի մեջ ջուր լցնելուց հետո (ոչ հոսող), պետք է մեկ հաբ ասպիրին ավելացնել:

**Մեխակներն** ավելի լավ են դիմանում սենյակային ջերմաստիճանի ջրում: Ջուրը շատ հաճախակի պետք չէ փոխել:

**Գեորգինաները** սիրում են մի թեթեւ քացախով թթվեցրած ջուր (ծաղկամանի ջրին ավելացրեք 1 ճաշի գդալ 9 տոկոսանոց քացախ): Քացախի փոխարեն, կարելի է ասպիրին գցել (1 լիտր ջրին՝ 1 հաբ):

**Գերբերաների** խավածածկ ցողունները չի կարելի խոր ջրի մեջ ընկղմել. ջրի մեջ պետք է լինի ցողունի առավելագույնը մեկ երրորդ մասը: Ցանկալի է ջրի մեջ աղ ավելացնել (1լ ջրին՝ 1 թեյի գդալ աղ): Այս ծաղիկները չեն սիրում միջանցիկ քամի:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ՆԱՐԴՈՒ ՄԱՍԻՆ



***Այս խաղը մոտավորապես 5 հազար տարվա պատմություն ունի: Հնագիտական պեղումների արդյունքում, նարդու տախտակներ են հայտնաբերվել Պարսկաստանի շրջակայքում: Համանման խաղ է հայտնաբերվել նաեւ եգիպտական Թութանհամոն փարավոնի դամբարանի պեղումների ժամանակ:***

Մ.թ.ա. III հազարամյակում նարդին առեղծվածային եւ խորհրդանշական նշանակություն ուներ: Աստղագետները տիրակալների ճակատագրերը գուշակում էին մարդու օգնությամբ: Խաղադաշտը երկինքն էր խորհրդանշում, իսկ քարերը՝ աստղերը: Քարերի համար նախատեսված 12 վանդակներով տախտակի երկու կեսերը ասոցիացվում էին տարվա 12 ամիսների հետ: Տախտակը բաժանված էր չորս մասի՝ նկատի ունենալով տարվա եղանակները: Քարերի քանակը հավասար էր լուսնային եւ ոչ լուսնային ամիսների օրերին:

Նարդին մեծ տարածում է ստանում խաչակրաց արշավանքների ժամանակ: Եվրոպայում միջին դարերում այս խաղը հանրահայտ է դառնում: Նարդի բառը, որպես խաղի անվանում, սկսել է օգտագործվել թագավորների կողմից, քանի որ հենց բարձր խավի ներկայացուցիչներն իրավունք ունեին նարդի խաղալ:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ

## Ի՞ՆՉ ԴԻՐՔՈՎ ԵՔ ՔՆՈՒՄ



***Պարզվում է՝ նաեւ քնելու դիրքն է «մատնում» մարդու էությունը: Այս ոլորտի մասնագետներն ասում են՝ ասա, թե ինչպես ես քնում, կասեմ՝ ով ես դու:***

**1.** Եթե դուք չեք կարողանում քնել, եթե ծնկով չեք հենվում ինչ-որ բանի կամ որեւէ մեկին, ուրեմն դուք հանգիստ եւ հուսալի անձնավորություն եք: Նաեւ՝ ընկերական շրջապատի հոգին եք: Դյուրին չէ ձեզ վիրավորելը, եւ դուք չեք վախենում ապագայից: Դուք ունակ եք ժպտալ նույնիսկ ամենամռայլ առավոտները եւ հեշտությամբ ընտելանում եք ցանկացած փոփոխության:

**2.** Եթե քնում եք սաղմի դիրքով, նշանակում է, որ հաճախ եք պաշտպանության, փոխըմբռնման ու կարեկցանքի կարիք զգում: Դուք զգայուն անձնավորություն եք ու հաճախ ազատություն եք տալիս արցունքներին: «Գունդուկծիկ» քնելով, դուք, ասես, պատսպարվում եք շրջապատող աշխարհից: Փորձեք ձեր տաղանդն ու ունակություններն օգտագործելու միջոց գտնել՝ սովորեք նկարել կամ պարել, մասնագիտական բլոգ ստեղծեք:

**3.** Ձեռքերն ու ոտքերը լայն տարածելով՝ որովայնի վրա քնում են առաջնորդները: Եթե «երջանկության» բերումով դուք քնելու եք այդպիսի մարդու հետ, ուրեմն պատրաստ եղեք ծվարել պատի կողմի մի անկյունում: Այդպիսի մարդիկ եռանդուն եւ նախաձեռնող են. նրանք ընտանիքում եւ աշխատավայրում նրբանկատորեն հետեւում են կարգուկանոնին, նախընտրում նախապես պլանավորել ամեն ինչ ու չեն սիրում անակնկալներ: Իրենց համառության ու պատասխանատվության շնորհիվ այսպիսի մարդիկ արագորեն հաջողության, բարեկեցության են հասնում:

**4.** Մեջքի վրա քնում են առաքինի մարդիկ եւ արքաները: Նրանք դրական եւ կենսախինդ են, սովոր են լինել ուշադրության կենտրոնում, սիրում են ուրախ միջավայր: Աշխատանքում նրանք համառ են ու կամակոր, բայց նաեւ իրատես եւ նախընտրում են ասել ճշմարտությունը: Ընտանիքում եւ շրջապատում առաջնորդ են, միշտ՝ համընդհանուր ուշադրության կենտրոնում:

Մեջքի վրա գերազանցապես քնում են տղամարդիկ, բայց լինում են նաեւ «երկաթյա» կանայք:

**5.** Եթե դուք քնում եք պահակակետի զինվորի նման, նշանակում է՝ հավասարակշիռ անձ եք, ով կյանքում ունի կոնկրետ նպատակներ ու դրանց հասնելու ձգտում: Դուք խստություն ու պահանջկոտություն եք ցուցաբերում, բայց շատ ավելի պահանջկոտ եք ինքներդ ձեր հանդեպ:

**6.** Քնում եք ծննկուլի նմա՞ն. ինքնատիպ անհատականություն եք: Մշտապես ձեզ ձգում են արկածները, իսկ ձեր տրամադրության կտրուկ փոփոխությունները հաճախ շփոթեցնում են շրջապատի մարդկանց:

Ձեր եթերային քնքշությունը միանգամից կարող է վերափոխվել ատամնաքարդոցի եւ՝ հակառակը: Հաճախ դժվարանում եք ընտրություն կատարել: Կյանքում եւ աշխատանքում նախընտրում եք կայունությունը, անդորրը եւ կարգուկանոնը:

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

## ՈՎ Է ԽԵԼԱՑԻ

***Խելացին պարտադիր չէ, որ գերազանցիկ կամ հիմնարկի առաջավոր լինի: Խելացի մարդը նա է, ով գիտի, թե ինքն ինչ է ուզում, հասկանում է, թե դա ինչպես պետք է անել եւ անում է:***

Հոգեբանները նշում են, որ արտաքնապես գրավիչ մարդիկ առավել մեծ ճանաչման են արժանանում, հետեւաբար, խելացին, հաշվի առնելով այն փաստը, որ շրջապատում նախեւառաջ դիմավորում են հագուստով, չի անտեսում իր արտաքին տեսքը:

Խելացի մարդը կարողանում է լսել զրուցակցին: Լսելով եւ տեղին հարցեր տալով՝ կարելի է շատ նոր բաներ իմանալ:

Խելքի մեծ մասը կապված է պարզապես հիշելու, ինչպես նաեւ անհրաժեշտ պահին մտքի «պահոցից» անհրաժեշտ գիտելիքը հանելու եւ դրանից օգտվելու ունակության հետ:

Խելացի մարդու միտքը սահմանափակ չի լինում: Նա լսում է բոլորին, այլ ոչ թե միայն նրանց, ում հետ ինքը համաձայն է, կարդում է բազմաժանր գրականություն եւ միշտ սովորելու նոր բան է ունենում:

Խելացի մարդը լեզվակռվի մեջ չի մտնում:

Եվ, ամենագլխավորը, խելացի մարդը երբեք ինքն իրեն խելացի չի հռչակում, այլ խնամքով մյուսներից թաքցնում է իր մտավոր ունակությունները:

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Անտարբերությունը համարյա հանցագործություն է, մեղավոր է նաեւ նա, ով ասում է՝ ինձ չխայթող օձը թող հազար տարի ապրի:

***ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ***
***(990-1058)***
***Հայ գիտնական, փիլիսոփա***

Թե չկրենք վիշտը, ասա, արդյոք ցավին մենք ի՞նչ անենք.
Թե Աստծուց խինդ ենք ուզում՝ ցավն էլ անխոս պիտի տանենք:

***ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ***
***(1172-1216)***
***Վրաց բանաստեղծ***

Քայլ ձեռնարկեք, եւ ճանապարհն ինքնըստինքյան կուրվագծվի:

***ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅ***
***(1828-1910)***
***Ռուս գրող***

Ամենահաճելին մի այնպիսի գործ անելն է, որն, ըստ ուրիշների կարծիքի, վեր է ձեր ուժերից:

***ՄԱՐԻԱ ԿՅՈՒՐԻ***
***(1867-1934)***
***Ֆրանսիացի ֆիզիկոս***

Ավելի լավ է թեկուզ փոքր գործ անել, քան գործողություններից զուրկ մեծ ծրագրեր կազմել:

***ՖՐԱՆԿԼԻՆ ԴԵԼԱՆՈ ՌՈՒԶՎԵԼՏ***
***(1882-1945)***
***ԱՄՆ 32-րդ նախագահ***

Կան մարդիկ, որոնք չեն լսում, թե դու ինչ ես ասում, իսկ կան նաեւ այնպիսիք, որոնք լսում են, թե դու ինչ ես մտածում: Պետք է շնորհակալ լինել երկրորդներին:

***ՆԻԿՈԼՈ ՊԱԳԱՆԻՆԻ***
***(1782-1840)***
***Իտալացի ջութակահար***

Երբեք հույս մի տուր, եթե չես կարող այն արդարացնել:

***Մ.ՍԱՐԳՍՅԱՆ***
***«Վրաստանի» ընթերցող***

²Üº Î¸àÎÜºð

*☺ Որդին հարցնում է հորը.*

*- Պա՛պ, լապտերիկը որտե՞ղ է:*

*- Ինչի՞դ է պետք:*

*- Ժամադրության եմ գնում:*

*- Քո տարիքում, որդի՛ս, ես ժամադրության առանց լապտերիկի էի գնում:*

*Որդին՝ մատով ցույց տալով մորը.*

*- Դե՛ տես, թե մթության մեջ ի՞նչ ես ընտրել:*

*☺ Իրար ընդառաջ են ընթանում երկու ինքնաթիռ: Մեկի օդաչուն մյուսին ռադիոկապով ասում է.*

*- Լսիր, պետք է ճանապարհը փոխենք:*

*- Ճիշտ է: Արի էսպես անենք. դու աջ գնա, ես՝ ձախ:*

*☺ Հուղարկավորում են մի տղամարդու: Անցորդներից մեկը հարցնում է.*

*- Ինչի՞ց է մահացել:*

*- Ծաղկեպսակների վրա կարդա,- խորհուրդ են տալիս նրան:*

*Անցորդը կարդում է. «Սիրելի կնոջից», «Զոքանչից», «Փեսաներից»...*

*☺ - Սիրելի՛ս, ես հրո՞ք քո միակն եմ...*

*- Չեմ հասկանում, էսօր բոլորդ պայմանավորվե՞լ եք:*

*☺ Զոքանչը գալիս է աղջկան ու փեսային հյուր: Փեսան դուռը բացում է.*

*- Զոքանչ մայրիկ, էս երկա՞ր ես մնալու:*

*- Մինչեւ զզվացնեմ:*

*- Փաստորեն, մի հատ կոֆե էլ չես հասցնի խմե՞լ:*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՄԱԼԹԱՅԻ ԱՐՔԱՅԱԶՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ

*Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հրավերով, պետական այցով, Հայաստանում էր գտնվում Մալթայի Ինքնիշխան Մարտական Ուխտի Արքայազն եւ Մեծ վարպետ Ֆրա Մեթյու Ֆեսթինգը:*



Հոկտեմբերի 24-ին, Հայաստանի նախագահի նստավայրում, տեղի ունեցավ Նորին Վսեմություն Արքայազն եւ Մեծ վարպետ Ֆրա Մեթյու Ֆեսթինգի եւ նրա գլխավորած պատվիրակության դիմավորման պաշտոնական արարողությունը, որին հաջորդեց Հայաստանի նախագահի եւ Մեծ վարպետի հանդիպումը ընդլայնված կազմով՝ երկու երկրների պաշտոնական պատվիրակությունների մասնակցությամբ:

Այցի շրջանակներում, Նորին Վսեմություն իշխան եւ Մեծ վարպետ Ֆրա Մեթյու Ֆեսթինգը հանդիպում ունեցավ նաեւ Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց կաթողիկոսի, Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ, ինչպես նաեւ այցելեց Հայոց ցեղասպանության հուշահամալիր, Մայր Տաճար, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գանձարան ու թանգարան, Խոր Վիրապի վանք, Սուրբ Գրիգոր Նարեկացի Կաթոլիկե եկեղեցի, մայրաքաղաքի հատուկ կարիքներով երեխաների թիվ 2 դպրոց, Հայաստանում Մալթայի Ինքնիշխան Մարտական Ուխտի դեսպանություն:

Հայաստանի նախագահի հետ հանդիպումից հետո, նախագահի նստավայրում Սերժ Սարգսյանը եւ Մալթայի Ինքնիշխան Մարտական Ուխտի արքայազն ու Մեծ վարպետ Ֆրա Մեթյու Ֆեսթինգը զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների առջեւ հանդես եկան հանդիպման արդյունքների վերաբերյալ հայտարարություններով:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԵՏ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԱՋՈՐԴ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՕՐԸ ՀԱՅՏՆԻ ՉԷ



*Հոկտեմբերի 25-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում է ունեցել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովի (Ռուսաստան), Ջեյմս Ուորլիքի (ԱՄՆ), Պիեռ Անդրիոյի (Ֆրանսիա) եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկի հետ:*

Զրուցակիցները քննարկեցին ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացին եւ առկա խնդիրներին վերաբերող հարցեր:

Համանախագահները Հայաստանի նախագահին ներկայացրին այցի առաքելության շրջանակներում մինչ այս Բաքվում եւ Ստեփանակերտում ունեցած հանդիպումների արդյունքները:

Կարեւորվեց բանակցային գործընթացում հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված հանձնառություններին կողմերի հավատարմությունը, Վիեննայում եւ Սանկտ-Պետերբուրգում բարձր մակարդակով ձեռք բերված պայմանավորվածությունների կատարումը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻՆ

*Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանը Բելառուսի մայրաքաղաք Մինսկում մասնակցել է Եվրասիական միջկառավարական խորհրդի հերթական նիստին:*

ԵԱՏՄ անդամ պետությունների կառավարությունների ղեկավարների՝ նեղ կազմով նիստին հետեւել է համատեղ լուսանկարման արարողությունը, ինչից անմիջապես հետո անդամ պետությունների վարչապետերը մասնակցել են ընդլայնված կազմով խորհրդի աշխատանքներին: Եվրասիական միջկառավարական խորհրդի ընդլայնված կազմով նիստին քննարկվել եւ հավանության են արժանացել մի շարք նախագծեր: Մասնավորապես, խորհուրդը հավանության է տվել ԵԱՏՄ մարմինների 2017 թվականի միասնական բյուջեի ու 2015 թվականի միասնական բյուջեի կատարողականի նախագծերը:

Եվրասիական միջկառավարական խորհրդի ընդլայնված կազմով խորհրդի նիստին ելույթով հանդես է եկել Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանը:

### ԿԱՐԵՎՈՐՎԵԼ ԵՆ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՅԼԵՐԸ

*Բելառուսի Հանրապետություն կատարած աշխատանքային այցի շրջանակում, Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանը Մինսկում առանձնազրույց է ունեցել Ռուսաստանի Դաշնության կառավարության ղեկավար Դմիտրի Մեդվեդեւի հետ:*



Ընդգծելով այն հանգամանքը, որ երկու երկրներին նախեւառաջ կապում են դաշնակցային-ռազմավարական հարաբերությունները, Կարեն Կարապետյանն ու Դմիտրի Մեդվեդեւը կարեւորել են երկկողմ առեւտրատնտեսական հարաբերություններն առավել խորացնելու ուղղությամբ իրականացվող քայլերը՝ նկատի ունենալով նաեւ այն հանգամանքը, որ Եվրասիական տնտեսական միությունում Հայաստանի եւ Ռուսաստանի ներգրավվածությունը նոր հնարավորություններ եւ հեռանկարներ է ուրվագծում:

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 8-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Դուք մեծ ուժ եք, դուք ձեր գործունեությամբ մեզ վստահություն եւ եռանդ եք տալիս, որպեսզի մենք կարողանանք ուժերի առավելագույն գործադրմամբ կատարել մեր պարտականությունները,- հայտարարեց Սերժ Սարգսյանն ու հավելեց,- շատ կարեւոր է որպեսզի մենք մեր ջանքերը կարողանանք համատեղել, գտնել այն էական խնդիրները, որոնց լուծման վրա պետք է ծախսենք մեր հիմնական էներգիան ու մեր կարողությունները:

Ողջույնի խոսքից հետո, նախագահն առաջարկեց հանդիպումն անցկացնել հարցուպատասխանի ձեւաչափով, որպեսզի հնարավորություն ունենա պատասխանել լրագրողներին հետաքրքրող բոլոր հարցերին:

Լրագրողներին եւ լրատվամիջոցների ղեկավարներին հետաքրքրեցին ԼՂ հիմնախնդրի բանակցային գործընթացում հայկական կողմի մոտեցումներն ու դիրքորոշումը, Հայաստանի նոր սահմանադրությամբ երկրում իրականացվելիք բարեփոխումները, Հայաստան-սփյուռք կապերի ամրապնդման եւ առկա ներուժի, այդ թվում՝ լրագրողական համայնքի ներուժի լիարժեք օգտագործման հնարավորությունները, Հայաստանի տնտեսության մեջ օտարերկրյա ներդրումների ներգրավման ուղղությամբ իրականցվող պետական քաղաքականությունը եւ մի շարք այլ հարցեր:

## ԱԶԱՏՎՈՒՄ ԵՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ

*Այսուհետեւ Հայաստանի քաղաքացիները, ովքեր այլ պետության քաղաքացիություն են ստանում, կարող են այդ մասին չտեղեկացնել ոստիկանությանը:*

Ազգային ժողովը քննարկում է «Քաղաքացիության մասին» Հայաստանի օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը: Նշվեց, թե գործող օրենքով սահմանված է, որ անձինք, ովքեր ոստիկանությանը չէին տեղեկացնում քաղաքացիության փոփոխության մասին, տուգանվում էին 50 հազար դրամով, բայց, օրենքի փոփոխությամբ, առաջարկվում է մարդկանց ազատել վարչական այդ պատասխանատվությունից:

Նշվեց նաեւ, որ, ներկա դրությամբ, երկքաղաքացիություն ունեցողների թիվը 95 839 է, իսկ այս տարվա օգոստոսի դրությամբ, այդ թիվը եղել է 94 050:

## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



*Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորները եւ աշխատակազմը հարգանքի տուրք մատուցեցին 1999թ. հոկտեմբերի 27-ի ոճրագործության զոհերի հիշատակին: Պատգամավորները եւ ԱԺ աշխատակազմի ներկայացուցիչները ծաղիկներ դրեցին խորհրդարանի բակում հոկտեմբերի 27-ի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանին:*

*Ազգային ժողովի պատգամավորները նիստերի դահլիճում աշխատանքները սկսելուց առաջ եւս մեկ րոպե լռությամբ հարգեցին 1999թ. հոկտեմբերի 27-ի ոճրագործության զոհերի հիշատակը:*

*Հիշեցնենք, որ 1999թ. հոկտեմբերի 27-ին Հայաստանի ԱԺ-ում կատարված ոճրագործությանը զոհ գնացին ԱԺ նախագահ Կարեն Դեմիրճյանը, վարչապետ Վազգեն Սարգսյանը, Ազգային ժողովի փոխնախագահներ Յուրի Բախշյանն ու Ռուբեն Միրոյանը, օպերատիվ հարցերով նախարար Լեոնիդ Պետրոսյանը, պատգամավորներ Արմենակ Արմենակյանը, Հենրիկ Աբրահամյանը եւ Միքայել Քոթանյանը:*

## ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ. «ՊԵՏԲՅՈՒՋԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՔ ՀԱՍԿԱՆԱԼԻ ԼԵԶՎՈՎ»

*Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանը կառավարության անդամներին հանձնարարեց պատգամավորներին եւ հանրությանը հասկանալի լեզվով ներկայացնել այն մոտեցումներն ու սկզբունքները, որոնց ներքո ձեւավորվել են իրենց ոլորտների բյուջեները:*

*- Ինչպես գիտեք, հոկտեմբերի 31-ին Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում կմեկնարկեն պետական բյուջեի մասին օրինագծի քննարկումները, այդ իսկ պատճառով կարեւորում եմ, որ ձեր ոլորտների ներկայացումները լինեն ավելի շատ ծրագրային բյուջետավորման ձեւաչափով եւ բխեն կառավարության ծրագրային դրույթներից: Մասնավորապես, անհրաժեշտ է պատգամավորներին եւ հանրությանը հասկանալի լեզվով ներկայացնել այն մոտեցումներն ու սկզբունքները, որոնց ներքո ձեւավորվել են ձեր ոլորտների բյուջեները,- ասաց վարչապետը:*

*Կ.Կարապետյանը բոլոր նախարարներին հորդորեց պատրաստվել առավելագույնս ուշադիր:*

## ԲԵՆԶԻՆԸ ԷԺԱՆԱՑԵԼ Է ՄՈՏ 11,9 ՏՈԿՈՍՈՎ

*Բենզինի գինը Հայաստանում 2016 թվականի հունվար-օգոստոսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 11,9 տոկոսով: Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, 2015 թվականի հունվար-օգոստոսի համեմատ, դիզելային վառելիքի գինը 2016 թվականի հունվար-օգոստոսին էժանացել է 17,3 տոկոսով:*

*Միեւնույն ժամանակ, սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ամսվա համեմատ, գրանցվել է բենզինի եւ դիզելային վառելիքի՝ համապատասխանաբար՝ 11,8% եւ 19,6% գնանկում:*

*Հայաստանում բենզինի եւ դիզելային վառելիքի գների անկումը պայմանավորված է համաշխարհային շուկայում նավթի գների անկումային տատանումներով:*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

**ՀՈԿՏԵՄԲԵՐ** *29.10.2016. Հիշատակ Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետի*

*31.10.2016. Սուրբ Ստեփանոս Հռոմի Հայրապետի, քահանաների, սարկավագների եւ մարդկանց հիշատակության օր*

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐ

## ԳՅՈՒՄՐԻԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲԸ՝ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

***Խանդավառ ծափեր, հիացական օվացիաներ, հոգեկան հաճելի հագեցվածության զգացում: Այսպիսին էր Թբիլիսիի Մերաբ Բերձենիշվիլու անվան «Մուզա» մշակույթի միջազգային կենտրոնում, հոկտեմբերի 26-ին, Հայաստանի Գյումրի քաղաքի պետական սիմֆոնիկ նվագախմբի համերգից ստացած տպավորությունը:***



Հայաստանի անկախության 25-ամյակի նախագծի շրջանակներում իրագործված համերգը կայացավ Շիրակի մարզի մարզպետի խորհրդական, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Հասմիկ Կիրակոսյանի նախաձեռնությամբ եւ Վրաստանում Հայաստանի դեսպանության, Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի աջակցությամբ:

Համերգից հետո, մենք զրուցեցինք նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ դիրիժոր Երվանդ Վարոսյանի հետ:

***- Հայաստանի երկրորդ քաղաքը լինելով՝ Գյումրին ունի պետական նվագախումբ, դա հազվադեպ փաստ է. խնդրում ենք երկու խոսքով պատմել Ձեր նվագախմբի մասին:***

- Նվագախումբը հիմնադրվել է 1993թ.-ին, դա հետերկրաշարժյան շրջանն էր, քաղաքում դեռեւս բարոյահոգեբանական ծանր մթնոլորտն էր իշխում: Նման պայմաններում, նվագախմբի ստեղծումը գյումրեցու արվեստի հանդեպ բնատուր սիրո եւ նրա կենսունակության ապացույցն էր: Նրա հիմնադրման շնորհակալ գործում մեծ է տիկին Հասմիկ Կիրակոսյանի դերակատարումը, ինչի համար մենք նրան կատակով անվանում ենք՝ «նվագախմբի կնքամայր»: Մեր նվագախումբը ունի մի խոստումնալից յուրահատկություն. տարեց վարպետների կողքին մենք ունենք նաեւ երիտասարդ շնորհալիներ, եւ դրանից բնավ չի տուժում նվագախմբի այսօր ունեցած մրցունակությունը:

***- Հավանաբար, սա Գյումրիի սիմֆոնիկ նվագախմբի հերթակա՞ն այցելությունն է Թբիլիսի:***

- Ո՛չ, սա մեր անդրանիկ այցն է Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսի, եւ մեր նպատակն է ներկայացնել հայ մշակույթը: Երեկոյի ծրագիրը ներառում էր հիմնականում հայ կոմպոզիտորների՝ Ռուբեն Ալթունյանի, Էդուարդ Բաղդասարյանի, Մելիք Մավիսակալյանի ու նաեւ Ռեւազ Լաղիձեի ու Ժան Կլոդ Պետտիի ստեղծագործությունները:

Հուսով ենք, որ մեր այցին կհետեւի վրաց արվեստի վարպետների պատասխան այցելությունը Գյումրի...

***ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ***

ՀՈԲԵԼՅԱՆ

## ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՆՇԵՑԻ ՄԻՔԱՅԵԼ ԹԱՐԻՎԵՐԴԻԵՎԻ 85-ԱՄՅԱԿԸ



***Հոկտեմբերի 25-ին Վրաստանի մայրաքաղաքում, տեղի ունեցավ գալա-համերգ՝ նվիրված նշանավոր կոմպոզիտոր Միքայել Թարիվերդիեւի ծննդյան 85-ամյակին: «Միքայել Թարիվերդիեւ: Հիշիր այս ակնթարթը» խորագրով երեկոն անցկացվեց Թբիլիսիի Զ.Փալիաշվիլու անվան օպերայի եւ բալետի պետական թատրոնում:***

Հոբելյանական գալա-համերգին մասնակցեցին երաժիշտներ՝ ռուսաստանցի դիրիժոր եւ մանկավարժ Ալեքսանդր Պոլյանիչկոն, սոպրանո Հերմինե Զարյանը, ռուսաստանցի դաշնակահար Ալեքսեյ Գորիբոլը եւ «Մերիդիան» տրիոն:

Բացի այդ, միջոցառմանը ներգրավված էին Թբիլիսիի Ա.Գրիբոյեդովի անվան պետական ռուսական դրամատիկական թատրոնի արտիստներ, ինչպես նաեւ Թբիլիսիի օպերայի եւ բալետի թատրոնի մենակատարներ: Գալա-երեկույթի ընթացքում հատվածներ ցուցադրվեցին հայտնի կինոֆիլմերից, որոնց համար երաժշտությունը գրել է Միքայել Թարիվերդիեւը: Օպերային թատրոնի ճեմասրահում կազմակերպվել էր կոմպոզիտորի լուսանկարների, ձեռագրերի եւ աֆիշաների ցուցահանդեսը:

Երեկոն կազմակերպել էին Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պաշտպանության նախարարությունը, ՌԴ մշակույթի նախարարությունը, «Ռոսկոնցերտ»-ը, Մ.Թարիվերդիեւի անվան բարեգործական հիմնադրամը եւ «Ռուսական ակումբ» միջազգային մշակութային-լուսավորչական միությունը:

ՆՈՐՈՒՅԹ

## «ՄՈԱՄԲԵՆ»՝ ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԵՐԵՆ

Վրաստանում բնակվող հայերն ու ադրբեջանցիները հետայսու իրենց մայրենի լեզվով կկարողանան դիտել Վրաստանի Հանրային հեռուստատեսության առաջին ալիքի նորությունների թողարկման գլխավոր «Մոամբե» հաղորդումը: Ինչպես նշեց «Մոամբե» տեղեկատվական ծառայության ղեկավար Գիորգի Գվիմրաձեն, 12 րոպեանոց եթերը թույլ չէր տալիս ներկայացնել այն պատկերը, որ տեղի էր ունենում երկրում, հետեւաբար, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները ինֆորմացիայի պակաս ունեին: Թվային հեռարձակումը հնարավորություն է տալիս ստանալ աուդիոազդանշանները, եւ Վրաստանի տարածաշրջանային հեռուստատեսությունների ասոցիացիայի (GARB) օգնությամբ, Վրաստանում ԱՄՆ դեսպանության հետ միասին, սկսեց մի նախագիծ, որն արդեն անցել է երկամսյա թեստային աշխատակարգ ու շնորհանդեսային ցուցադրում: Դրանից կարող են օգտվել նաեւ նրանք, ովքեր ունեն հեռուստատեսության թվային սարքեր՝ ռեսիվեր (Set top box): Հատկանշական է, որ երկրի քաղաքացիներն ստանան տեղեկատվության հավասար «փայաբաժիններ»: Ավելացվել է նաեւ աբխազերեն, օսերեն եւ ռուսերեն տարվող հաղորդումների տեւողությունը:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ



Լրացավ Ախալքալաքի շրջկոմի նախկին առաջին քարտուղար, Խորհրդային Վրաստանի մսամթերքային արդյունաբերության, երկրի առեւտրի նախարար, «Ցեկավշիրիի» նախկին փոխնախագահ, ներկայումս Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարության խորհրդատու Ալեքսանդր Մովսիսյանի 80-ամյակը:

Ի սրտե շնորհավորում ենք Ալեքսանդր Օգանեզովիչին հոբելյանի առթիվ, մաղթում նրան քաջառողջություն, երկարակեցություն եւ հաջողություններ աշխատանքում:

***«Վրաստան» թերթի խմբագրություն***



## ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Երիտասարդ, խոստումնալից դերասան ... Լեւոնյան: 4.Հայաստանի արդարադատության նախարարի անունը: 9.... կարմիր: 10.Իրականությունը տեսնող: 13.Հերոսուհի Նար-Դոսի «Սպանված աղավնին» վիպակում: 15.Րաֆֆու «Դավիթ ...» վեպը: 16.Իտալական քաղաք: 18.Թաշկի..., ավա...: 19.Ափսե, պնակ: 20.Իտալացի օպերային կոմպոզիտոր Ջակոմո ...: 22.Անգլիացի ճանապարհորդ Ջեյմս ...: 24.Ե.Չարենցի պոեմներից: 26.Ձեռքի մաս: 27.Երգիչ ... Հովհաննիսյան: 30.Ալ.Շիրվանզադեի «Նամուսի» հերոսուհի: 32.Ռոք երաժշտության աստղ ... Գիլան: 34.... ճաշ: 35.Սուրճի նստվածքը, դիրտ: 36.Անտառի հատապտուղներից: 37.Պարատեսակ: 39.Հերոս՝ «Բանակում» ֆիլմում: 40.Բանջարանոցի գետակը: 43.Անտա..., ապ...: 45.Ամերիկացի դերասանուհի ... Գարդներ: 47.Ձկան տեսակ: 48.Էքստրասենս ... Ջունակ: 49.«... այս գիշեր վառենք բոլոր մոմերը» (ժող.երգ): 50.Թվեր եւ ...եր: 51.Լրագրող ... Լիստեւ: 53....վաս, ...կարդո: 56.Ալբերտը տանը: 58.Իրակլին մոտիկների մոտ: 59.Հեռախոսային բառ: 61.Վիրահայ գրող Ա.Գեւորգյան «Լինենք ... ու բարի»: 63.Ասիական պետություն: 64.Հմուտ օդաչու: 65.ՌԴ ազգային ժողովը: 66.Անգլիացի գրող ... Ռիդ: 67.Խոհանոցային պարագա: 68.Օպերային երգիչ ... Հովհաննիսյան:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Մամիկոնյանների ամրոցը: 3.Դրախտային, դրախտին հատուկ: 4.Գովազդային գործակալություն Թբիլիսիում: 5.Կճղիթավոր կենդանի: 6.Երնեկ, երնակ: 7.Երեւանի ... անվան փողոց: 8.Ռուսաստանի արեւելյան մասը: 11.Մեսրոպյան այբուբենի տառ: 12.Եռանկյունաչափական ֆունկցիա: 14.Երգչուհի ... Մկրտչյան: 17.Հայ ֆիդայի Նիկոլը: 20.Ամերիկացի հայտնի գրող Էդգար ...: 21.Աշխույժ, ժիր, չարաճճի: 23.«Կյանքս ... հայրենիքիս» (երգ): 24.Անտառային կենդանի: 25.Վրաց դասական Շոթա ...: 26.Շինարար թագավոր Վրաստանում: 28.Որեւէ տրանսպորտային միջոցով գնալ: 29.Հաղորդավարուհի ... Շլեպչյան: 30.Երկարության չափման միավոր: 31.Հինգերորդ նոտան: 33.Հայոց թագավոր: 36.Վրաստանի նախկին երջանկահիշատակ վարչապետ ... Ժվանիա: 38.Թթվի տարա: 41.Նախկին կինոթատրոն Երեւանում: 42.Անապատի «նավը»: 44.Րաֆֆու վեպերից: 46.Վրաց գրող ... Ծերեթելի: 52.Թաքստոց, պահվելու տեղ: 54.Քաղաք Իրաքում: 55.Անկողնային պարագա: 56.Անծայր, անեզր (բրբ.): 57.Հարցական դերանուն: 60.«Ժիգուլի» ավտոմեքենայի այլ անվանումներից: 62.Կղզի Վանա լճում:

***Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 6.Եղյամ: 8.Իկոնա: 10.Ռեալ: 11.Բառ: 13.Դարան: 14.Վարդուհի: 16.Կամո: 17.Սե: 18.Միջուկ: 20.Շիլա: 22.Ռոմ: 23.Սկոտ: 27.Հաբեթ: 29.Խնամի: 32.Պաս: 33.Շեմ: 35.Ատոմ: 36.Ալիկա: 37.Գնաց: 39.Ցեց: 42.Նախշ: 44.Միմինո: 46.Կայմ: 49.Ծիլ: 50.Լալա: 53.Կտուց: 54.Շեղ: 55.Լիմ: 56.Պրուս: 57.Բեմ: 58.ՖԻՖԱ: 59.Նառ: 60.Լավ: 61.Կառ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Ուղղաթիռ: 2.Ամեն: 3.Սիլվա: 4.Մոնրո: 5.Խաբուսիկ: 7.Առաքում: 9.Բռի: 12.Ահել: 15.Ամեոբա: 19.Ջոկատ: 21.Աղ: 24.Կապոց: 25.Տեսակ: 26.Հիմն: 28.Բեկ: 30.Նամե: 31.Մոգ: 33.Շիվա: 34.Մարշ: 38.Անիծ: 40.Ցայտուն: 41.Դիլեմա: 42.Նոլ: 43.Խալիֆա: 45.Միշել: 47.Ակր: 48.Մուսա: 51.Ալիկ: 52.Ամառ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445